

ԵՐԱԺԵՏԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏԱՐԱԳԸ

Ինքնանպատակ կրկնութեան համար չէ որ պիտի ասեմ թէ այս մոլորակի վրայ հայ ժողովուրդն առաջինն էր՝ որ քրիստոնէութիւնն ընդունեց իրրեւ պետական կրօն, եւ առաջնորդուեց նրա պատուիրաններով: Պատմութիւնն ինքն է հաւաստողը, թէ հայ ժողովուրդը դրանից շատ ու շատ առաջ էլ օժտուած էր հաւատի, բարոյականութեան ու կենցաղի այնպիսի յատկանիշներով, որ ընդգծում էին նրա քրիստոնէական նախադրեալները:

Սոյն գրութեամբ ես ուզում եմ դիմել հայոց քրիստոնէական երաժշտութեան ակունքներին՝ անշուշտ շատ հակիրճ, իրրեւ հայ ժողովրդի ոգեղէն հարստութեան զուգակցումն իր հազարամեակների կենցաղին, որ միեւնոյն ժամանակ սկիզբն ու խթանն է հանդիսացել Արեւմտեան քաղաքակրթութեան մէջ մասնագիտացուած երաժշտարուեստի սկզբնաւորման ու զարգացման: Եւ այս դրոյթի իրրեւ զօրաւոր ապացոյց՝ պիտի բաւարարուեմ Մոսկուայի երաժշտանոցի վաստակաշատ պրոֆեսոր-երաժշտագէտ Վալենտինա Կոնէնի խոր ուսումնասիրութիւնների արդիւնքով յանգած այն եզրակացութեան մէջքերումով, թէ «Գրիգորեան շարականը՝ Կաթողիկէ ժամերգութեան հիմքը, ըստ այնմ եւ ողջ եւրոպական «Պրոցեսիոնալ» երաժշտութեան հիմքը, սկզբնաւորուել է Հայկական Պատարագի ուղղակի ազդեցութեան ներքոյ»:

Պատահական չէ անշուշտ, որ Բելգիացի Ֆերդինանդ Լուազէն դեռեւս 1859 թուականին հրատարակած իր «Քաղաքակրթութեան ազդեցութիւնը

քաղաքակրթութեան վրայ» աշխատութեան մէջ գրում է. «Բանաստեղծութեան նիւղին մէջ աշխարհի ո՛չ մէկ գրականութիւն կրնայ հաւասարիլ կամ քաղդատուիլ հայկական քաղաքակրթութեան հետ՝ իր յուզական խորհրդաւոր խորութեամբ, կրօնաշունչ ջերմութեամբ: Եւրոպայի մէջ քրիստոնէական քաղաքակրթութիւնը երբեք չէ կարողացած հաւասարիլ հայկական Շարակնոցին»:

Համոզուած եմ թէ եթէ Աստուծոյ արարչութիւններէց ամենավեհը, ամենաբարձրը, ամենէն աստուածայինը երաժշտութիւնն է, ոգեզուգահեռ երաժշտութիւնը, ապա նա երկիր է առաւել Բարձրեալին կողմից նաեւ իրրեւ միխթարութիւն, սփոփանք եւ ամոհում քիւրաւոր տառապանքներով լի մարդկութեան կենցաղին մէջ, եւ անշուշտ՝ առաջին հերթին՝ հայ ժողովուրդին, այնքան անողոքաբար խոշտանգուող իր գոյութեան ողջ ընթացքին: Եւ ահա, մեր քաղաքացեալ հայ հոգեւոր մշակոյթի պատմութեան հնչուն յուշարձանները մեր Պատարագի տաղերն ու մեղեդիներն են: Այդ մեղեդիները՝ ներքողներ, գովերգութիւններ, համառօտ վարձագրութիւններ, աւետարանական դրուագներից ներշնչուած պատմութիւններ են, որոնք յօրինուել են եկեղեցական տօնակատարութիւններին աւելի հանդիսաւորութիւն տալու համար:

Առ հասարակ Պատարագը ամբողջական դարձած քրիստոնէական հնագոյն եւ կարեւորագոյն ծիսական ստեղծագործութիւնն է, որի քովանդակութիւնը խորհրդանշում է Փրկչին

գոհարերումը յանուն մարդկութեան ազատագրման: Ձեռով մը՝ խորհրդաւոր ընթրիքի գեղարուեստական վերարտադրումն է:

Պատմական զարգացման ընթացքում, քրիստոնէական Պատարագը զգալիօրէն փոխել է իր բնոյթը, ու նաեւ ազգայնացել է - տարբեր ժողովրդների մօտ: Առաջինից երրորդ դարերում այն տոգորուած է եղել պայմարի ոգով՝ արտայայտելով ճնշուած ազգերի բողոքը: Չորրորդ դարից՝ եկեղեցու պատմական յաղթանակից յետոյ, պայմարի ոգին մեղմացել է եւ վերջում անճանաչելիօրէն շղարշուել: «Գոռ պատերազմող» նկարագիր ունեցող հնագոյն Պատարագները՝ միջին դարերում ձեռք են բերել անկախ խաղաղ ու հանդիսաւոր բնոյթ: Հայկական Պատարագի զարգացումն սկսուել է Լուսաւորչից ու Ներսէս Մեծից (Դ. դար), շարունակողներն են՝ Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց (Ե. դար), Յովհան Մանգակունցի (Է. դար), Խաչատուր Տարօնեցի (ԺԲ.-ԺԳ. դար), Յովհաննէս Երզնկացի Պոլոզ (ԺԳ. դար), եւ ուրիշներ:

Իւրատեսակ հոգեւոր քատրերգութիւն դարձած Պատարագը բաղկացած է յաջորդաբար ընդարձակուող երեք մասից. - ա. Պատրաստութիւն, ք. Երախայից պատարագ, գ. Հաւատացելոց պատարագ: Հայոց պատարագում այդ մասերը տարբերակուում են. - ա. Սկզբից մինչեւ «քարեխօսութեամբ»-ն ու ժամամուտը, ք. Ժամամուտից «Սուրբ, սուրբ»-ը, գ. «Սուրբ, սուրբ»-ից մինչեւ վերջ:

Հայոց Պատարագի մէջ ներառուած բազմազան, բազմաձեւ, բազմաբովանդակ մեղեդիները սկիզբ են առել ու ձեւաւորուել դեռեւս հայ միջնադարեան վերածնունդի վաղ

արշալոյսին, շատ տարբեր փոխառած լինելով հեթանոսական շրջանի ժողովրդական, ծիսային, գուսանական երգարուեստից: Դրանք աստիճանաբար զարգացել, կատարելագործուել են՝ հասնելով բարձրակառոյց ոճական միաձայնային երաժշտութեան զագաթին:

ԺԳ. դարում մնացել է հայկական Պատարագի ամբողջական գրաւումը՝ խազերով: Խազերի գործածութիւնից դուրս գալուց յետոյ՝ բնականաբար այդ երգեցողութիւնը շատ փոփոխութիւն է կրել քանաւոր փոխանցման հետեւանալով, եւ ստացել տեղային երանգներ: Եղածները նոր հայկական նոտագրութեամբ (Լիմոնե-եանի) ձայնագրելու փորձեր՝ շատե՛րն են արել. ամենահաւաստին եւ ամբողջականը Ն. Թաշեանինն է, Գէորգ Դ. Կաթողիկոսի երգածից: Գրառմանը մասնակցել է նաեւ Եկմալեանը, ու հրատարակուել է 1874 եւ 1878թ.թ. Վաղարշապատում՝ «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» խորագրով: Բուն Պատարագին երգերը - նրա խօսքերի բովանդակութեան հիմնական քաժիններին համապատասխան - խմբուած են չորս գլխաւոր եղանակների շուրջ. - «Սուրբ Աստուած», «Սո՛ւրբ, սո՛ւրբ», «Հա՛յր մեր», «Միայն սուրբ»: Սրանց ելեւէջներով ներթափանցուած են միւս բոլոր երգերը:

Արհեստավարժ («Պրոֆեսիոնալ») երաժշտութեան զարգացման ընթացքին -միաձայնութիւնից քաղմաձայնի անցնելու անհրաժեշտութեամբ - Պատարագը երգչախմբի փոխադրելու փորձեր են արուել տարբեր երաժիշտների կողմից: Առաջիններից մէկը ուկրայինացի Լ. Մ. Կրապիվնիցկին է իւր ներդաշնակութիւնը աւարտած է

1873 թուականին: Յաջորդը իտալացի Պ. Բիանինին է, որ 1877ին հրապարակ է իջեցնում Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մէջ աւանդուող եղանակներով - ֆառաձայն արական խմբի համար դաշնաւորած տարբերակը: Օր. էմի Արգարը բազմաձայնել է իրանահայոց եւ հնդկահայոց եղանակներով երգուած Պատարագը՝ «Հնդկահայոց Պատարագ» խորագրով, եւ զայն առաջին անգամ հրատարակել է Կալկաթայում՝ 1896ին, ապա վերահրատարակել է Լոնդոնում՝ 1920ին: 1885-86թ. Կարա-Մուրզան իր կազմած առաջին ֆառաձայն երգչախմբերով հնչեցրել է իւր ներդաշնակած Պատարագը:

1896ին Լայպցիգ-Վիեննայում հրատարակուում է եկամալեանի ներդաշնակած Պատարագը, ուր օգտագործուած են Ն. Թաշնեանի ձայնագրած եղանակները, եւ յաւելուած են՝ էջմիածնում պահպանուած այլեւայլ հատուածներ: Մինչ այս Պատարագի մասին որոշ մանրամասերի ընդգծումը, ֆանի այն հենց այդ թուականից Հայրապետական Կոնդակով ընդունուել է իրրեւ թոլոր հայ եկեղեցիների համար երգուող՝ եւ ցարդ մնում է առաջին լաւագոյնը, ասեմ թէ ի՛նչպէս նախֆան այդ, ա՛յնպէս էլ մանաւանդ յետոյ՝ շարունակուել են Պատարագը գրելու ստեղծագործական փորձերը, ընդ որում երբեմն՝ եթէ ոչ իրրեւ ամբողջական ծիսակատարութիւն, այլեւ առանձին բեմումներով:

Այսպէս, Անդրկովկասում՝ Կարա-Մուրզայից յետոյ Պատարագի վրայ աշխատել են՝ Գ. Ղորղանեանը, Կաթողիկոս Գէորգ Զ. Զէօրեմեանը: Բազմաթիւ պոլսահայ երաժիշտներ ստեղծել են տարբեր գեղարուեստական մակարդակի եւ արժէքի Պատարագներ:

Դրանց մէջ են՝ Լ. Զիլինկիրեանի եռաձայն Պատարագը: Ի դէպ, այն Կոմիտասի 1907թ. Վ. Մանկունի եպիսկոպոսին ուղղած նամակում լուրջ ֆննդատութեան է արժանացել: Ռ. Զոպանեանը նոյնպէս փորձել է Պատարագը՝ մեներգիչի, երգչախմբի, երգեհոնի համար, իր իսկ դեկավարութեամբ հնչել է Փարիզում, Ֆրեզնոյում: Լաւագոյններից է էդգար Մանասինը, գրուած 1910-12թ.թ., ապա սրբագրուած ու հրատարակուած 1948ին: Յիշատակութեան արժանի է նաեւ Բարսեղ Աբմանեանի լիաժաւալ Պատարագը: Օննիկ Պերպերեանը 1922ին Պոլսից Գահիրէ փոխադրուելով՝ այնտեղ գրում է իր Պատարագը:

Ինքնատիպ է Արա Պարթեւեանի՝ եղեռնի զոհերի յիշատակին նուիրած Պատարագ-Օրատորիան՝ մեներգիչների, երգչախմբի, նուագախմբի համար: Կոմիտասից յետոյ՝ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Արքայապետ Արսէն Այտընեանը ստեղծում է իր Պատարագը՝ Պոլսոյ եղանակներից եւ Շարակնոցից վերցրած մեղեդիներով, ֆառաձայն երկսեռ երգչախմբի, երգեհոնի եւ նուագախմբի համար: Նոյն Ուխտից Վարդապետ Սրապեանը ստեղծում է իր ներդաշնակած Պատարագը՝ Այտընեանից վերցրած եղանակներից, հրատարակուած Վենետիկ՝ 1936 թուականին: Մեծապէս հակուած դէպի հոգեւոր երաժշտութիւնը, ամերիկահայ երգահան Ռիչարդ Նարտմեանը 1967ին աւարտում է իր Պատարագը, որի մասին ամերիկեան ֆննդատը գրում է. «Նարտմեանը ստեղծել է մի տաճարի համագօր գործ»: Իսկ Յրանսահայ Բաֆֆի Ուրկանեանը 1965ին գրել է իր «Նումաս Պատարագ»ը՝ երգեհոնի համար:

Եթէ ամբողջական Պատարագի

ստեղծման չեն յանգել, սակայն ամբողջ էութեամբ հայ հոգեւոր երաժշտութեան բարգաւաճումին են ուղղուած եղել շատ այլ հայ երաժիշտների մտքերն ու ջանքերը, որոնց մէջ ակնածանքով պիտի նշել Նշան Սերգոյեանին, որ մեծ վաստակ ունի հայ հոգեւոր երաժշտութեան ձայնագրման, դասակարգման, եւրոպական նոտագրութեան փոխադրման ու ներդաշնակման մէջ: Այդ աշխատանքն ամփոփուած է 10 պրակներում, որոնցից մէկը օգտագործուած է նշանաւոր ֆրանսիացի երաժիշտ Դոմ Բեռնար Ուտիէ կողմից եւ հրատարակուած «էքիւտ Կրեկորիէն» պարբերականի 14րդ թուին մէջ, 1978 թուականին:

Էդուարդ Յակոբեանի «Հայկական Պատարագի Տաղեր եւ Մեղեդիներ»-ում, հրատարակուած Գահիրէում՝ 1968ին, զետեղուած են 18 մեղեդիներ: Բացի երկուսից՝ որ երգեհոնային նուագակցութիւն ունեն, միւսները միաձայնային են, եւ ինչպէս հեղինակն է գրում պրակի առաջաբանում, նպատակադրուած է «... մեր երաժշտական հոգեւոր գանձարանին այս չֆնաղ զարդերը սեփականութիւնը դարձնել հայ երգիչներուն...»: Հայ հոգեւոր երգերից է կազմուած իրանահայ երգահան-նուագավար Ռուբէն Գրիգորեանի «Ռեկվիեմ»ը: Նոյն ծագումով երգահան Լուդվիգ Բազիլի «Ոստնուայի երգերը» եւ Նարեկացու «Մատեան Ողբերգութեան»ից «Ի Խորոց Սրտի Խօսք Ընդ Աստուծոյ» հատուածը, վաղամեռիկ երաժշտի բարձրարուեստ ստեղծագործութիւններից են:

Անդրադառնալով Եկմալեանի Պատարագին՝ գրուած եռաձայն արական եւ քառաձայն արական ու երկսեռ երգչախմբերի համար, անհրաժեշտ է

ընդգծել թէ իրաւամբ ուղիղ մէկ դար է՝ ինչ այն մնում է հայոց պատարագի ամենէն ընտիր տարրերակը, բացառեալ Կոմիտասին: Այն՝ աստիճանաբար ծաւալուող, լայնացող ու խորացող հոգեւոր թատերագութիւն է՝ վիպաֆնարական բնոյթի բարեհնչուն, շփեղ երաժշտութեամբ: Անցնելով Կոմիտասի Պատարագին, այն նախապէս կարելի է ներկայացնել սփիւռֆահայ մտաւորական, գրող Յակոբ Ասատուրեանի բնութագրմամբ, «իբրեւ միաձոյլ քերթողութիւն ու երաժշտութիւն, ակնագոհարը մեր սրբազան հայրերու դարաւոր վաստակին»:

Կոմիտասի Պատարագում՝ մեղեդիների ընտրութիւնից ու մշակումից յետոյ՝ առաւելապէս կարեւորուած է դրանց ներդաշնակման ստեղծագործական մօտեցումը, որ ինչպէս Ն. Թահմիզեանն է գրում, «եզակի երեւոյթ է, համագգային եւ նոյնիսկ ազգայինի սահմաններից որոշակիօրէն դուրս եկող ողջ նշանակութեամբ»: Կոմիտասի Պատարագը բացառիկ խոր եւ ընդլայն վերլուծութեան նիւթ է, որ դուրս է սոյն գրութեան շրջանակից: Թերեւս կարելի է ասել միայն, թէ այն՝ շնորհիւ իր կառոյցի, բազմաձայնային բարձրագոյն մասնագիտացուած մակարդակի՝ ստանում է գեղարուեստական ներգործութեան հսկայ ոյժ, եւ դրսեւորում է բնական գործողութեան ծաւալման ու ձայնային երաժշտահնչուն ուղակաւորութեան մի նոր փոխյարաբերութիւն եւ ամբողջական տրամախօսական ոյժ:

Թերեւս եկեղեցին առջնութիւնը տալիս է ընդհանուր թատերային գործողութեանը, ջանալով երաժշտութեանը ենթակայական դեր յատկացնել, բայց այս դէպքում այդ անհնար էր, երբ երաժշտութիւնը ստեղծուել է անկեղծ

հաւատով Բարձրեալին ու Վեհին ծառայող մեծագոյն երաժշտի կողմից: Կոմիտասի Պատարագն ըստ էութեան մտայղացուած ու իրականացուած է իրրեւ մեծակերտ հոգեւոր ստեղծագործութիւն, որով իր ժողովրդի խորախորհուրդ ձայնն ուղղում է առ Աստուած: Զուր չէ որ Լիւի Անդրէ Մարսէլ Յրանսացի գրողն ու Նարեկացու առաջին թարգմանիչն ասում է. «Ես որ եկեղեցի չեմ երթար, հեռու եմ կրօնական ջերմեռանդութենէ, ամէն անգամ որ ունկնդրեմ Կոմիտասի Պատարագը, կը հոգեփոխուիմ, կը վերանամ: Իր Պատարագը գլուխ-գործոց մըն է»:

Զեմ կարող եւ չեմ ուզում լռութեամբ անցնել այն իրողութեան վրայով, որ եկմալեանի ու Կոմիտասի սրբագրութիւններին յետոյ՝ իրրեւ երրորդ պաշտօնականօրէն ընդունուած է համարուել այսպէս կոչուած «Խորէնեան Պատարագը»: Խուսափելով այս սուրբ թեմային վերաբերող գրութեան մէջ զգրախօսութեամբ զբաղուելուց, սակայն պիտի յայտնեմ քացառիկ անհաշտութիւնս այդ թիրիմացութեան հետ, եւ փոխարէնը մէկ նոր առաջարկ ներկայացնեմ Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոսի ուշադրութեանը՝ յանուն հայ հոգեւոր երաժշտութեան մթնոլորտի ընդլայնման, նրա համաժողովրդական բարձր ներագդեցութեան.- արդէն թուարկածս եւ թերեւս յայտնաբերելիք բոլոր

հայկական պատարագային երաժշտա-երկերը հաւաքել, համատեղել, հերթագրել, եւ տարուան ընթացքին մէկական անգամ հնչեցնել դրանք՝ ըստ պատշաճի ընտրուած եկեղեցական արարողութեան ընթացքին, հայոց բոլոր եկեղեցիներում: Այսպիսով, թէ՛ կը հնչի սրբազան երաժշտութիւնը՝ ժողովրդին ծանօթ դարձնելով հեղինակին ու հոգեւոր երգի տարատեսակութեանը, թէ՛ կը խրախուսուի, իսկ՝ թերեւս՝ գերագոյն չափով կը նշուի յիշատակը արդէն աշխարհից մեկնած այն երախտաւորի, որ իր հաւատին ու ջանքը ներդրել է մեր սուրբ մեղեդիների վերադաշնութեան գործին:

Դժուար չէ երեւակայել թէ որպիսի ցաւ եւ ընդվզում է առաջանում, երբ ականատես ես ողջ աշխարհում ֆրիստոնէական հաւատքի, նրա բարձրագնիւ էութեան նուաստացմանն ու նոյնիսկ ոտնահարմանը՝ ֆաղափական գռեհիկ նիւթապաշտութեան, ընչափաղց, անմարդկային, հակաֆրիստոնէական նկրտումների ու դրանց ուժային կիրառման միջոցներով: Մինչեւ ե՞րբ, մինչեւ՝ ո՞ր աստիճան...: Ուրեմն, այս խոր մտահոգութեամբ ու ողջ էութեանս բուռն պոռթկումով է որ անհրաժեշտ համարեցի գէթ դոյզն չափով ոգեկոչել ֆրիստոնէութեան բարձրագոյն էութիւնը, եւ այն փոխանցել հայ ժողովրդին իրրեւ փրկութեան փարոս՝ լուսարձակուող աստուածային երաժշտութեան միջոցով:

ՅԻՅԻԼԻԱ ԲՐՈՒՏԵԱՆ